ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/62

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի քննելով ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական սարքավուրումների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25 ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Մեդիքալ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի կողմից 21.08.2019թ. ներկայացված և 21.08.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/62 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Մեդիքալ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մեդիքալ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 21.08.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

սույն թվականի օգոստոսի 12-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակվել է ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25 ծածկագրով բաց մրցույթի հրավեր: Հրավերով սահմանվում է՝ Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 17:00-ին: (Հայտերի բացումը՝ 2019 թվականի օգոստոսի 22-ին ժամը 17:00-ին):

Ընկերությունը, ուսումնասիրելով հրավերը, բախվել է մի շարք անհամապատասխանությունների, որոնք, ըստ Ընկերության, անհնար են դարձնում օրենքի սահմաններում որևէ կազմակերպության մասնակցությունն ու հետագայում պայմանագրի կնքումը սույն ընթացակարգի շրջանակներում:

Մասնավորապես.

1. հրավերի առաջին էջում Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն «գնանշման հարցման» ընթացակարգի վերաբերյալ, այնինչ նույն հրավերի երկրորդ էջում սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը հայտարարում է բժշկական սարքավորումների ձեռքբերման «բաց մրցույթի» հրավեր:

2. Հրավերով սահմանված, գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը բացի հայերենից կազմվել են նաև ռուսերեն, ինչը իրականացվել է ի կատարումն ՀՀ ֆինանսների նախարարության 25.03.2017թ. պետական կառավարման մարմիններին և Երևանի քաղաքապետարանին ուղված թիվ 01.1/26/4873-2019 շրջաբերականի:

ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված գնման առարկաների տեխնիկական բնութագրերի հայերեն և ռուսերեն լեզուներով սահմանված մի շարք տեխնիկական չափորոշիչներ հակասում են մեկը մյուսին, մասնավորապես՝

5-րդ չափաբաժնով նկարագրված «Ուլտրաձայնային սարք գունավոր դոպլերով 3 տվիչ» ապրանքի հայերեն լեզվով կազմված տեխնիկական բնութագրում պահանջվում է TFT մոնիտորի թույլատվությունը ոչ պակաս, քան՝ 1280x1024, այնինչ նույն ապրանքի ռուսերեն լեզվով բնութագրում այդ չափորոշիչը սահմանված է 12800x1024:

11-րդ չափաբաժնում նկարագրված գինեկոլոգիական բազկաթոռի տեխնիկական բնութագրով պահանջվում է այդ բազկաթոռի փոշիապատ լինելը, իսկ ռուսերեն նույն պարամետրը նկարագրված է որպես. С порошковое напыление: Բնութագիրը բացարձակ անհասկանալի է:

14-րդ չափաբաժնում նկարագրված գինեկոլոգիական գործիքների հավաքածուի մեջ պահանջվում է.

Հեմոստատիկ սեղմիչ 1x2 notched, notched, curved No. 1 - 4 հատ:

Հեմոստատիկ սեղմիչ 1x2 շողոքորթ, ուղիղ գիծ 3 3 - 4 հատ:

Բացի այն, որ, օրինակ, շողոքորթ հեմոստատիկ սեղմիչ բնութագրիչն առնվազն անհասկանալի է, այն նաև բացարձակ չի համապատասխանում ռուսերեն լեզվով տրված բնութագրիչին.

Зажим гемостатический 1x2 зубчатый, зубчатый, изогнутый № 1 - 4 шт.

Зажим гемостатический 1x2 зубчатый, прямой № 3 - 4 шт.

Ընկերությունը հայտնել է, որ 25.03.2019թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նշված պատվիրատուներին շրջաբերականով ներկայացված պահանջի կատարումը պարտադիր է ի ապահովում ԵԱՏՄ պայմանագրով ստանձնված պարտավորությունների:

3. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ բոլոր տեխնիկական բնութագրերին ամբողջապես պիտի համապատասխանեն առնվազն երկու արտադրողի կողմից արտադրված տարբեր արտադրանքներ: 1-ին չափաբաժնով նախատեսվող երևակման չոր սարքի (ռենտգեն համալիրի համար) բնութագրում, ըստ էության, նկարագրված է մեկ այլ սարքի՝ ռենտգենյան ժապավենների մշակման սարքի կամ թվայնացման համակարգի բնութագիր: Որևէ չոր երևակման սարք այս տեխնիկական բնութագրերով Ընկերությանը հայտնի չէ, և մանրամասն ուսումնասիրությունից հետո նույնիսկ, գտնել չհաջողվեց: Ընկերության համոզմամբ, այս չափաբաժնով որևէ կազմակերպության մասնակցության դեպքում և, առավել ևս, առաջին տեղ զբաղեցրած կամ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում պրակտիկորեն անհնարին է լինելու այս բնութագրիչներով և անվանումով ապրանքի մատակարարումը:

4. 4-րդ չափաբաժնով պահանջվող «անխափան սնուցման սարք ունիվերսալ ռենտգեն համալիրի համար» ապրանքի համար պահանջվում է ISO 13485 կամ համարժեք տեսակի

որակի սերտիֆիկատ: ISO 13485 որակի սերտիֆիկատը, և, համապատասխանաբար, դրա համարժեքները հաստատում են այն որակային պահանջները, որոնց պիտի համապատասխանի բժշկական պարագաների արտադրող ընկերության կառավարումը: Անխափան սնուցման սարքերը, անկախ նրանից, որ կարող են օգտագործվել բժշկական տարբեր սարքերի հետ, որևէ կերպ չեն կարող իրենք իրենցով համարվել բժշկական սարքեր/պարագաներ, հետևաբար ISO 13485 սերտիֆիկատի կամ դրա համարժեքի պահանջը սխալ է և անհիմն:

Սույն թվականի օգոստոսի 17-ին, առանց պարզաբանման հարցման ժամկետների խախտման, Ընկերությունը դիմել է Պատվիրատուին պարզաբանման հարցմամբ, որին սակայն, որևէ պատասխան չի ստացել:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնելով ներկայացված փաստերը և իրավական հիմքերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Պատվիրատուն ժամկետի առումով չի կարող իրականացնել հրավերի փոփոխություն, պարտավորեցնել ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25 ծածկագրով գնանշման հարցման Պատվիրատուի գնումների համար պատասխանատու ստորաբաժանմանը չեղյալ հայտարարել ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25 գնանշման հարցումը

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.08.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը 27.08.2019թ. թիվ ԱՍ/06.3/14078-19 գրությամբ «Մեդիքալ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի կողմից 21.08.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ընդունում է բողոքաբեր «Մեդիքալ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական բնութագրերի մասով արձանագրված անհամապատասխանությունները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.08.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2019/62 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/62 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական սարքավուրումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ) որի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով սահմանվել է գնման առարկայի տեխնիկական բնութագրերը:

2.Ընթացակարգի հրավերով սահմանված, գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը հայերենից բացի կազմվել է նաև ռուսերեն լեզվով:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մեդիքալ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի 21.08.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ առողջապահության նախարարության 27.08.2019թ. թիվ ԱՍ/06.3/14078-19 գրությունը, «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված

գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմվում և սույն օրենքով նախատեսված դեպքերում տեղեկագրում հրապարակվում են հայերեն, իսկ գնումների, այդ թվում՝ նախաորակավորման հայտարարությունները՝ նաև անգլերեն և ռուսերեն:

2. Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական սարքավուրումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով սահմանվել է գնման առարկայի տեխնիկական բնութագրերը:

Հայտերի բացումը նախատեսվել է հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 17:00-ին:

Ընթացակարգի հրավերով սահմանված, գնման առարկա հանդիսացող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը հայերենից բացի կազմվել է նաև ռուսերեն և հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում:

Արձանագրում եմ, որ բողոքով «Մեդիքալ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների տեխնիկական բնութագրերի հայերեն և ռուսերեն լեզուներով սահմանված մի շարք տեխնիկական չափորոշիչներ հակասում են մեկը մյուսին:

Միաժամանակ արձանագրում եմ նաև, որ ՀՀ առողջապահության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.08.2019թ. թիվ ԱՍ/06.3/14078-19 գրությամբ ընդունել է ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25 ծածկագրով ընթացակարգի հրավերով հայերենով և ռուսերենով սահմանված տեխնիկական չափորոշիչների անհամապատասխանությունների փաստը:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25 ծածկագրով ընթացակարգի գնման առարկաների հայերեն և ռուսերեն լեզուներով սահմանված տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև Ընկերության կողմից տեխնիկական բնութագրերի մասով բողոքով ներկայացված տարբեր լեզուներով սահմանված տեխնիկական չափորոշիչների վերաբերյալ անհամապատասխանությունների փաստը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը հաստատում է հայտարարության և հրավերի տեքստերը:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝

1) գնումները համակարգողը.

2) պատասխանատու ստորաբաժանումը.

3) գնահատող հանձնաժողովը:

Կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից

սահմանված ժամկետներում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը:

Կարգի 31-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է հրավերի տեքստը:

Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ հրավերը նախաորակավորված մասնակիցներին տրամադրելու օրվանից:

Այսպիսով՝ վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլև նաև մասնակիցների «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը, օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու հստակ գործընթաց, նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու պայմանները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման նպատակն է պատվիրատուի հատուցմամբ վերջինիս կարիքների համար կոնկրետ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ուստի Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվել են պարտադիր պահանջներ ուղղված գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանը: Մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Դրա հետ մեկտեղ՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ

հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ընդ որում տեխնիկական բնութագրի կազմման՝ Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով Կարգի 13-րդ կետով նախատեսվել է, որ պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:

Դրա հետ մեկտեղ Կարգի 15-րդ կետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25» ծածկագրով ընթացակարգի հրավերը հայերեն և ռուսերեն լեզուներով, գտնում եմ, որ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը, ինչպես նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25» ծածկագրով ընթացակարգի տեխնիկական բնութագրերը հայերեն և ռուսերեն լեզուներով կազմելիս և հաստատելիս, թույլ են տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի վկայակոչված՝ տեխնիկական բնութագրի մասով գնման հայտի կազմմանն, հրավերի տեքստի հաստատման համար սահմանող պահանջների, ինչպես նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումներ, քանի որ հայերեն և ռուսերեն լեզուներով սահմանված տեխնիկական բնութագրերում առկա մի շարք տեխնիկական չափորոշիչներ (բողոքով արձանագրված) հակասում են մեկը մյուսին: Ուստի գտնում եմ, որ նման հակասական տեխնիկական հատկանիշներով առարկայի գնումը համարժեք չի կարող հանդիսանալ այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-

2019/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը: Այսպիսով գտնում եմ, որ Պատվիրատուն նման ձևով կազմելով տեխնիկական բնութագրերը չի ապահովել գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, միաժամանակ չի ապահովել ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունը:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեդիքալ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ի կողմից 21.08.2019թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**